

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂՈՎ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ



Telcell
WALLET

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն հրապարակային պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանում է ԹԵԼ-ՍԵԼ վճարահաշվարկային համակարգում (այսուհետ՝ Համակարգ) էլեկտրոնային վճարային միջոցների օգտագործման պայմանները և, ՀՀ գործող Քաղաքացիական օրենսգրքին համապատասխան, հանդիսանում է «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ (այսուհետ՝ Թողարկող) հայտարարած ծառայություններից օգտվելու՝ պաշտոնական գրավոր հրապարակային առաջարկ (Ծառայություններից օգտվելու օֆերտա)՝ ուղղված Համակարգում ֆիզիկական և իրավաբանական անձանց ծառայությունների մատուցմանը: Ծառայություններից օգտվելու օֆերտան կարող է ներկայացվել առցանց եղանակով կամ Թողարկողի մասնաճյուղերում՝ Թողարկողի սահմանած ձևով դիմում լրացնելու միջոցով, կամ Թողարկողի սահմանած այլ եղանակով:

Ընդունելով օֆերտայի պայմանները՝ Հաճախորդը հաստատում է, որ ամբողջությամբ ծանոթացել է և ամբողջ ծավալով անվերապահորեն ընդունում է սույն Պայմանագրի պայմանները, ծառայություններից օգտվելու կանոններն ու սակագները, որոնց գործող տարբերակները գետեղված են Թողարկողի պաշտոնական կայքում և (կամ) ներկայացված են Թողարկողի մասնաճյուղերում (Հաճախորդ և Թողարկող, այսուհետ միասին՝ Կողմեր):

1.2. Թողարկողն ըստ գործող սակագների մատուցում է ծառայություններ, իսկ Հաճախորդն օգտվում է ծառայություններից՝ գործող օրենսդրության, ծառայություններից օգտվելու կանոնների և Պայմանագրի պայմանների համաձայն:

Թողարկողի կողմից մատուցվող ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) տեսակներն են.

- ա) էլեկտրոնային փողի թողարկում և ընթացիկ սպասարկում / Հաշվառման հաշվի համալրում (լիցքավորում),
- բ) էլեկտրոնային փողի սպասարկում,
- գ) էլեկտրոնային փողով վճարման իրականացում Թողարկողի մոտ գրանցված ծառայություններ մատուցողներին,
- դ) էլեկտրոնային փողի մարում,
- ե) էլեկտրոնային փողի փոխարկում,
- զ) էլեկտրոնային փողի փոխանցում,
- է) Թողարկողի պաշտոնական կայքում նկարագրված այլ ծառայություններ:

1.3. Ծառայությունների տեսակների, դրանց մատուցման եղանակների, հնարավոր գործառնությունների, ժամկետների, ծառայությունների համար սահմանված միջնորդավճարների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Թողարկողի ինտերնետային կայքում, միջնորդավճարների մասին նաև իրազեկվում է համապատասխան հրահանգի միջոցով տեղեկացման ձևով՝ նախքան յուրաքանչյուր գործարք կատարելը:

1.4. Օգտագործողների ավտոմատ եղանակով սպասարկումը իրականացվում է 24/7 ռեժիմով: Պայմանագրով սահմանված գործողությունները, որոնք չեն իրականացվում ավտոմատ եղանակով, Թողարկողն իրականացնում է իր ընդունած ներքին իրավական ակտերով սահմանված աշխատանքային օրերին ու ժամերին, որոնք ներկայացվում են Թողարկողի ինտերնետային կայքում և (կամ) Բջջային հավելվածում:

1.5. Համակարգում հաշվարկները կատարվում են ՀՀ դրամով:

2. Պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն Պայմանագրի իմաստով.

2.1. Էլեկտրոնային փող՝ Թողարկողի նկատմամբ դրամական պահանջ արտահայտող դրամական արժեք, որը.

ա) պահվում է էլեկտրոնային սարքի վրա,

բ) թողարկվում է ստացված դրամական միջոցների դիմաց, որոնց արժողությունը հավասար է թողարկված էլեկտրոնային փողի արժեքին (Թողարկողի թողարկած 1 (մեկ) միավոր էլեկտրոնային փողը հավասար է 1 (մեկ) ՀՀ դրամի),

գ) ընդունվում է որպես վճարամիջոց Թողարկողից տարբերվող այլ անձանց կողմից,

2.2. Էլեկտրոնային փող թողարկող (այսուհետ՝ Թողարկող)՝ «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն, որը ՀՀ տարածքում իրականացնում է էլեկտրոնային փողերի թողարկում՝ ՀՀ օրենքների և իրավական այլ ակտերի համաձայն,

2.3. Օգտագործող կամ Օգտատեր, կամ Հաճախորդ՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն իրավունք է ստացել Թողարկողի նախապես հայտարարած և սահմանած պայմանների ու կանոնների համաձայն իր ձեռք բերած էլեկտրոնային փողն օգտագործել Համակարգում մատուցվող ծառայություններում,

2.4. Հաշվառման հաշիվ (Հաշիվ)՝ Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում Օգտագործողի նկատմամբ Թողարկողի դրամական պարտավորության հաշվառման վերաբերյալ գրառումների ամբողջություն,

2.5. Վերալիցքավորվող էլեկտրոնային փող՝ Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում պահվող դրամական արժեք (կանխավճարված էլեկտրոնային արժեք), որը հնարավոր է վերալիցքավորել (ավելացնել),

2.6. Մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փող՝ Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում պահվող դրամական արժեք (կանխավճարված էլեկտրոնային արժեք), որը հնարավոր չէ վերալիցքավորել (ավելացնել),

2.7. Աուտենտիֆիկացիա՝ Օգտագործողի նույնականացման տվյալների (օգտագործողի մուտքանուն և գաղտնաբառ) վավերականության ստուգում,

2.8. Սպասարկում՝ էլեկտրոնային փողով գործառնությունների (ծառայությունների մատուցման) և դրանց հետ կապված հաշվարկների իրականացման ապահովում,

2.9. Վճարում՝ Օգտագործողի՝ իր նույնականացման տվյալների օգտագործմամբ տված վճարման կարգադրություն, որի արդյունքում Թողարկողը կատարում է Օգտագործողի Հաշվառման հաշվում առկա էլեկտրոնային փողի նվազեցում և փոխանցում վճարման ստացման վերջնական հասցեատիրոջը (շահառուին):

2.10. Մարում՝ Հաշվառման հաշվից էլեկտրոնային փողի դուրսբերում/կանխիկացում:

2.11. Համալրում (լիցքավորում)՝ Հաշվառման հաշվին Թողարկողի սահմանած եղանակներով գումարի մուտքագրում և էլեկտրոնային փողի մնացորդի ավելացում:

2.12. Փոխարկում՝ Համակարգում Օգտագործողի Հաշվառման հաշվից էլեկտրոնային փողի փոխարկում այլ համակարգում Օգտագործողի հաշվառման հաշվին,

2.13. Փոխանցում՝ Համակարգում Օգտագործողի Հաշվառման հաշվից էլեկտրոնային փողի փոխանցում Համակարգում այլ Օգտագործողի Հաշվառման հաշվին,

2.14. Գործարք՝ Թողարկողի նախապես հայտարարած և սահմանած պայմանների ու կանոնների համաձայն Օգտագործողի կողմից էլեկտրոնային փողի ձեռքբերում և էլեկտրոնային փողի օգտագործում Համակարգում մատուցվող ծառայություններում,

2.15. Մնացորդ՝ Համակարգում Օգտագործողի Հաշվառման հաշվին էլեկտրոնային փողի մնացորդ:

2.16. Սպասարկման կետ՝ Թողարկողի մասնաճյուղեր:

2.17. Տերմինալ՝ էլեկտրոնային ծրագրատեխնիկական ինքնասպասարկման սարք, որն ապահովում է ֆինանսական գործառնությունների իրականացումը՝ առանց ֆինանսական կազմակերպության աշխատակցի մասնակցության/միջամտության ,

2.18. Բջջային հավելված՝ շարժական սարքերում աշխատանքի ծրագրային ապահովում Թողարկողի կողմից, որի միջոցով հասանելի է դառնում Հաշվի կառավարումը, ծառայություններից օգտվելը, ինչպես նաև Հաճախորդի և ծառայություն մատուցողի միջև տեղեկատվության (այդ թվում՝ էլեկտրոնային ծանուցումների) փոխանակումը:

2.19. Գործակալ՝ Թողարկողից տարբերվող ֆինանսական կազմակերպություն, որը Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի Կանոնների համաձայն

իրականացնում է էլեկտրոնային փողի մարում և (կամ) Օգտագործողի Հաշվառման հաշվի համալրում (լիցքավորում):

2.20. Անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր կամ նույնականացման քարտ:

3. Հաշվառման հաշվի տրամադրումը և օգտագործման պայմանները

3.1. Էլեկտրոնային փողի Հաշվառման հաշիվ կարող է բացվել Թողարկողի ինտերնետային կայքի, Տերմինալների, Բջջային հավելվածի միջոցով, Սպասարկման կետերում՝ Թողարկողի ինտերնետային կայքում և (կամ) Բջջային հավելվածում նախապես ներկայացնելով Պայմանագիրը: Պայմանագրին Օգտագործողի հավանություն տալուց (ակցեպտավորելուց) հետո է միայն Օգտագործողի համար բացվում Էլեկտրոնային փողերի Հաշվառման հաշիվ, և այդ պահից ի վեր օֆերտան, սույն Պայմանագրի պայմանների, ծառայություններից օգտվելու կանոնների և սակագների հետ մեկտեղ, կազմում է Թողարկողի և Հաճախորդի միջև կնքված՝ կատարման համար պարտադիր պայմանագիր:

3.2. Թողարկողը Օգտագործողին տրամադրում է՝

ա) չնույնականացված Հաշվառման հաշիվ, եթե Օգտագործողը չի անցել նույնականացման գործընթաց,

բ) նույնականացված Հաշվառման հաշիվ, եթե Օգտագործողն անցել է նույնականացման գործընթաց:

3.3. Թողարկողի Սպասարկման կետերում Հաշվառման հաշիվը բացվում է Օգտագործողին նույնականացնելուց հետո, և տվյալ Օգտագործողի համար Համակարգում միանգամից բացվում է նույնականացված Հաշվառման հաշիվ: Թողարկողի Սպասարկման կետերում չնույնականացված Հաշվառման հաշիվ չի բացվում:

3.4. Ինտերնետ կայքով, Բջջային հավելվածով կամ Տերմինալով բացված Էլեկտրոնային փողի Հաշվառման հաշվի հավաստումը կատարվում է Օգտագործողի նախապես մուտքագրած հեռախոսահամարին կամ Էլեկտրոնային փոստի հասցեին հավաստման հրահանգ ստանալուց հետո, որին ուղարկվում են համապատասխան Հաշվառման հաշվի տվյալները:

3.5. Թողարկողի ինտերնետ կայքով, Բջջային հավելվածով կամ Տերմինալով գրանցվելիս, առանց Հաշվառման հաշվի նույնականացման, Օգտագործողն իրավունք ունի միայն լրացնել իր անձնական տվյալները, ինչպես նաև Պայմանագրով սահմանված կարգով ձեռք բերել մեկանգամյա չվերալիցքավորվող Էլեկտրոնային փող:

Թողարկողը իր ինտերնետ կայքի, Բջջային հավելվածի կամ Տերմինալի միջոցով հատուկ տեխնիկաձրագրային եղանակով կարող է իրականացնել Օգտագործողի հեռակա նույնականացում և տրամադրել վերալիցքավորող Էլեկտրոնային դրամապանակ:

3.6. Հաշիվը տրամադրվում է Օգտագործողի կողմից Պայմանագրի 7.1 կետով սահմանված եզրափակիչ գործողությունների կատարման ավարտին:

3.7. Չնույնականացված Հաշվի նույնականացումը իրականացվում է Պայմանագրի 5-րդ բաժնում սահմանված եղանակով՝ Օգտագործողի լրացրած անձնական տվյալների (անուն, ազգանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ) ճշտությունը հաստատելու միջոցով:

3.8. Չնույնականացված Հաշիվ ունեցող Օգտագործողը իր ձեռք բերած մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փողով Համակարգում կարող է կատարել միայն հետևյալ Գործարքները.

- ա) կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներ,
- բ) բջջային կապի ծառայությունների դիմաց վճարումներ,
- գ) հեռուստատեսային և ինտերնետ կապի ծառայությունների դիմաց վճարումներ,
- դ) բանկային և քարտային հաշիվների համալրում,
- ե) վարկերի մարում,
- զ) ապահովագրական վճարումներ,
- է) պետական վճարումներ, որոնք չեն պահանջում Օգտագործողի պարտադիր նույնականացում,
- ը) առցանց խաղերի համար և բուքմեյքերական ընկերություններին վճարումներ,
- թ) այլ վճարումներ, որոնք չեն պահանջում Օգտագործողի պարտադիր նույնականացում:

3.9. Չնույնականացված Օգտագործողի Հաշվառման Հաշվում պահվող մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փողը յուրաքանչյուր պահի չի կարող գերազանցել 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի համարժեքը:

3.10. Վերալիցքավորվող էլեկտրոնային փող ձեռք բերելու համար Օգտագործողը պետք է անցնի նույնականացման գործընթաց և Համակարգում ստանա նույնականացված Օգտագործողի կարգավիճակ:

3.11. Թողարկողի կողմից յուրաքանչյուր Օգտագործողին նույնականացնող Հաշվառման հաշվում (հաշիվներում) պահվող վերալիցքավորվող էլեկտրոնային փողը յուրաքանչյուր պահի չի կարող գերազանցել 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամին համարժեքը՝ անկախ յուրաքանչյուր Օգտագործողի անունով բացված հաշիվների քանակից:

3.12. Հաշիվ մուտք գործելը և տվյալ Հաշվի օգտագործմամբ ցանկացած Գործարքի կատարումը հնարավոր է միայն Օգտագործողի աուտենտիֆիկացումից հետո:

3.13. Հաշիվ մուտք գործելու ժամանակ Օգտագործողի աուտենտիֆիկացումն իրականացվում է Թողարկողի ծրագրային ապահովման միջոցով՝ Օգտագործողի նույնականացման տվյալների օգտագործմամբ:

3.14. Օգտագործողի նույնականացման տվյալները (մուտքանուն և գաղտնաբառ) ստեղծում է Օգտագործողը՝ ինքնուրույն: Օգտագործողը կարող է ծածկագիրը փոխել ցանկացած ժամանակ և անսահմանափակ քանակությամբ:

3.15. Օգտագործողը կրում է իր նույնականացման տվյալների գաղտնիության պահպանման ողջ պատասխանատվությունը: Հաշվի հետ կապված ցանկացած գործողություն, որը կատարվել է պատշաճ նույնականացման տվյալների օգտագործմամբ, համարվում է Օգտագործողի կողմից կատարված՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

3.16. Օգտագործողի՝ իր նույնականացման տվյալների կորստի դեպքում Թողարկողը Օգտագործողին թույլ է տալիս վերականգնել Հաշիվ մուտք գործելու հնարավորությունը՝ վերականգնման ծածկագրի մուտքագրման միջոցով, որը Թողարկողը տրամադրում է Օգտագործողի պահանջով՝ Հաշվառման հաշվին նախկինում կցված էլեկտրոնային հասցեին կամ բջջային հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելով:

3.17. Թողարկողն իրավունք ունի սահմանել Հաշվառման հաշիվ մուտքի տվյալների վերականգնման պայմանները՝ կախված Օգտագործողի Հաշվի տեսակից:

3.18. Թողարկողն իրավունք ունի Օգտագործողին մերժել Հաշվառման հաշիվ մուտքի տվյալների վերականգնումը, եթե.

3.18.1. մուտքի տվյալների վերականգնման համար Օգտագործողի ներկայացրած տվյալները տարբերվում են Համակարգում առկա տվյալներից, որոնք Թողարկողը ստացել է Օգտագործողի նույնականացման ժամանակ,

3.18.2. չնույնականացված Օգտագործողի ներկայացրած դիմումի ուսումնասիրման արդյունքում չի հաստատվել Օգտագործողին տվյալ Հաշվի պատկանելության փաստը:

3.19. Թողարկողն իրավունք ունի Օգտագործողի Հաշիվը արգելափակել.

3.19.1. ՀՀ իրավասու մարմինների նախաձեռնությամբ՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, համապատասխան լիազորություններ ունեցող իրավասու մարմնի կայացրած որոշման հիման վրա,

3.19.2. Օգտագործողի նախաձեռնությամբ՝ Օգտագործողի համապատասխան դիմումի հիման վրա, որը Թողարկողին է ներկայացվել հետևյալ եղանակներով.

ա) Թողարկողի զանգերի սպասարկման ծառայություն բանավոր դիմելով,

բ) անձը հաստատող փաստաթղթի առկայությամբ անձամբ դիմելով Թողարկողի Սպասարկման կետ,

գ) իր նույնականացման տվյալների օգտագործմամբ էլեկտրոնային դիմում ներկայացնելով Թողարկողին,

3.19.3. սեփական նախաձեռնությամբ՝ Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հետևյալ դեպքերում.

ա) Պայմանագրով սահմանված Հաշվի օգտագործման պայմանները Օգտագործողի խախտելու վերաբերյալ Թողարկողի կասկածի դեպքում,

բ) Հաշվին չարտոնագրված մուտքի կասկածի առկայության դեպքում,

- գ) ոչ ստանդարտ կամ տարօրինակ բարդ սխեմայով կատարվող Գործարքների առկայության դեպքում, որոնք բնորոշ չեն Թողարկողի Օգտագործողներին՝ նմանատիպ Գործարքների կատարելիս,
- դ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պահանջները Թողարկողի կատարելու դեպքում,
- ե) տեխնիկական պատճառներով էլեկտրոնային փողի գերաժախսի դեպքում:

3.20. Հաշվի արգելափակումը ենթադրում է Թողարկողի կողմից բոլոր գործառնությունների արգելումը, որոնք կարող են բերել էլեկտրոնային փողի մնացորդի փոփոխման:

3.21. Թողարկողի նախաձեռնությամբ Հաշվի արգելափակման ժամկետները կախված են արգելափակման հիմքերից.

- ա) մինչև Օգտագործողի թույլ տված՝ Հաշվի օգտագործման պայմանների բոլոր խախտումների վերացումը,
- բ) մինչև Թողարկողը վստահ լինի, որ Օգտագործողի Հաշվին չարտոնագրված մուտք տեղի չի ունեցել,
- գ) մինչև Օգտագործողի՝ կասկածելի Գործարք(ներ)ի մասով համապատասխան բացատրությունների և փաստաթղթերի ներկայացումը, որոնք պահանջել է Թողարկողը,
- դ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պայմանների համապատասխան,
- ե) մինչև Օգտագործողի կողմից էլեկտրոնային փողի համալրումը այն չափով, որքանով անհրաժեշտ է տեխնիկական պատճառներով էլեկտրոնային փողի գերաժախսը մարելու համար:

3.22. Հաշվի օգտագործման պայմանները.

3.22.1. Օգտագործողը պարտավոր է Հաշվին օգտագործելիս պահպանել ՀՀ օրենսդրությունը, Թողարկողի և երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը,

3.22.2. Օգտագործողը պարտավոր է Հաշվին օգտագործել անձամբ, իրավունք չունի տեղեկացնել կամ որևէ եղանակով երրորդ անձանց տրամադրել իր նույնականացման տվյալները,

3.22.3. Օգտագործողը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել իր Հաշվի մասին տեղեկությունները գաղտնի պահելու և չարտոնագրված մուտքները բացառելու անհրաժեշտ բոլոր միջոցները,

3.22.4. Օգտագործողը իրավունք չունի Հաշվին օգտագործել հակաիրավական գործողություններ կատարելու համար:

3.23. Օգտագործողի՝ իր նույնականացման տվյալների օգտագործմամբ Թողարկողին ուղարկած վճարման կարգադրությունները կամ ծանուցումները Կողմերի համար պատշաճ և բավարար են՝ Օգտագործողին նույնականացնելու, էլեկտրոնային փաստաթղթի իսկությունը և ամբողջականությունը հաստատելու համար: Թողարկողն իրավունք ունի որևէ վճարում ստացող անձին բացահայտել՝ Թողարկողի միջոցով նրան վճարում կատարած անձի

վճարման կարգադրություններում գործարքին վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն լրացնելու պարտադիր պահանջ սահմանելու միջոցով:

3.24. Օգտագործողի նույնականացման տվյալները Պայմանագրի շրջանակներում հանդիսանում է Օգտագործողի էլեկտրոնային ստորագրությունը:

3.25. Եթե Հաշվառման հաշվով վերջին 12 (տասներկու) օրացուցային ամիսների ընթացքում չի իրականացվել որևէ գործարք, ապա Թողարկողն իրավունքի ունի Հաշվառման հաշվից գանձել սպասարկման վճար՝ 13-րդ (տասներեքերորդ) ամսից սկսած (ներառյալ՝ 13-րդ (տասներեքերորդ) ամսվա համար), յուրաքանչյուր պասիվ ամսվա համար 1000 (մեկ հազար) ՀՀ դրամի չափով, իսկ Հաշվառման հաշվում 1000 (մեկ հազար) ՀՀ դրամից պակաս գումար լինելու դեպքում՝ Հաշվառման հաշվում առկա մնացորդի չափով: Ընդ որում՝ սույն կետի իմաստով Հաշվառման հաշվով գործարքի իրականացում չեն համարվում Թողարկողի կողմից Հաշվառման հաշվի սպասարկման վճարի գանձման կամ պետական որևէ մարմնի իրավական ակտի հիման վրա Հաշվառման հաշվից միջոցների բռնագանձման դեպքերը:

4. Հաշվի համալրումը, Հաշվից մարումը, փոխարկումը, փոխանցումը, էլեկտրոնային փողի արժեքը, գործողության ժամկետը, Հաշվով Գործարքների կատարումը և Հաշվի փակումը

4.1. Թողարկողի թողարկած էլեկտրոնային փողի 1 (մեկ) միավորը համարժեք է 1 (մեկ) ՀՀ դրամի, որի գործողության ժամանակամիջոցը սահմանված է անժամկետ:

4.2. Էլեկտրոնային փողի լիցքավորումը (համալրումը) կանխիկ եղանակով կատարվում է Թողարկողի Սպասարկման կետերի, Տերմինալների, Գործակալների միջոցով, անկանխիկ եղանակով՝ բանկերի թողարկած վճարային քարտերի, բանկային փոխանցումների, ԱրՔա վիրտուալ քարտերի և դրամական փոխանցումների համակարգերի, Համակարգում այլ Օգտագործողի Հաշվառման հաշվից փոխանցման միջոցով:

4.3. Թողարկողի Սպասարկման կետերի, Տերմինալների և դրամական փոխանցումների համակարգերի միջոցով Հաշվի համալրման համար անհրաժեշտ է նշել Օգտագործողի Հաշվառման հաշվի տվյալները: Լիցքավորման համար անհրաժեշտ գումարի ընդունումից հետո ձևավորվում է մուտքի օրդեր, որը ստորագրվում է գումարը վճարողի և Թողարկողի կողմից, այնուհետև մեկ օրինակը տրամադրվում է գումարը վճարողին: Մուտքի օրդերի ձևավորումից հետո Օգտագործողի Հաշվառման հաշիվը համալրվում է:

4.4. Թողարկողը կարող է սահմանել լրացուցիչ վճարովի ծառայություններ՝ կապված Հաշվի համալրման, Հաշվից միջոցների ելքագրման, փոխանցման դեպքում SMS հաղորդագրության միջոցով կամ այլ ձևով Օգտագործողին տեղեկացնելու համար:

4.5. Գործակալի միջոցով Հաշվառման հաշվի համալրման համար անհրաժեշտ է ֆինանսական կազմակերպություն ներկայացնել Օգտագործողի Հաշվառման հաշվի համարը:

Գործակալի միջոցով Հաշվառման Հաշվի համալրումը իրականացվում է Գործակալի հետ կնքված պայմանագրով սահմանված ժամկետում, որն ի գիտություն է հասցվում Օգտագործողին: Գործակալների ցանկը, որոնց միջոցով հնարավոր է փոխանցում կատարել Հաշվի համալրման համար, ներկայացվում է Թողարկողի ինտերնետային կայքում և (կամ) Բջջային հավելվածում:

4.6. Բանկի թողարկած վճարային քարտերի և ԱրՔա վիրտուալ քարտերի համակարգի միջոցով համալրումը կատարվում է սպասարկող բանկի (acquiring bank) միջոցով՝ տվյալ բանկի հետ կնքված պայմանագրով և ԱրՔա վիրտուալ քարտերի համակարգի կանոնակարգերով սահմանված դրույթներին համապատասխան:

4.7. Համալրման այլ եղանակների ու սակագների մասին տեղեկությունները տեղադրվում է Թողարկողի կայքում և (կամ) Բջջային հավելվածում:

4.8. Հաշվառման հաշվից մարում (կանխիկացում) կարող են կատարել միայն անձը հաստատող փաստաթղթի տվյալների հիման վրա նույնականացված Օգտագործողները: Չնույնականացված Օգտագործողները չեն կարող կանխիկացնել իրենց Հաշիվներում առկա էլեկտրոնային փողը:

4.9. Հաշվից մարումը կատարվում է Թողարկողի Սպասարկման կետերի, ինչպես նաև Թողարկողի սահմանած այլ եղանակներով, որոնց մասին Թողարկողը ծանուցում է իր ինտերնետային կայքի և (կամ) Բջջային հավելվածի միջոցով:

4.10. Թողարկողի Սպասարկման կետերի միջոցով, ինչպես նաև Թողարկողի սահմանած այլ եղանակներով Հաշվից մարման համար Թողարկողը ապահովում է Օգտագործողի պատշաճ նույնականացում:

4.11. Թողարկողի Սպասարկման կետերի միջոցով և Թողարկողի սահմանած այլ եղանակներով Հաշվից մարման համար կարող են սահմանվել միջնորդավճարներ, որոնք գետեղվում են Թողարկողի պաշտոնական կայքում և ի գիտություն ներկայացվում Օգտագործողին՝ նախքան Գործարքը կատարելը:

4.12. Թողարկողը Հաշվից մարման համար Օգտագործողի անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ պարզ և մատչելի ուղեցույց է տրամադրում՝ իր պաշտոնական ինտերնետային կայքում և (կամ) Բջջային հավելվածում:

4.13. Հաշվից մարման հրահանգում Օգտագործողի նշած գումարի չափով կատարվում է էլեկտրոնային փողի մարում՝ Հաշվում առկա միջոցների բավարար լինելու դեպքում:

4.14. Հաշվից մարման հրահանգը մերժվում է, եթե հրահանգում Օգտագործողի նշած գումարի չափով գումար Հաշվում առկա չէ: Մարման հրահանգը ենթակա չէ մասնակի կատարման:

- 4.15.** Համակարգից էլեկտրոնային փողի մարման ժամանակ էլեկտրոնային փողի 1 (մեկ) միավորը համարժեք է 1 (մեկ) ՀՀ դրամի:
- 4.16.** Օգտագործողի Հաշվառման հաշվից էլեկտրոնային փողի կանխիկացումը կատարվում է ՀՀ դրամով:
- 4.17.** Վճարային կամ փոխանցման Գործարք կատարելիս Օգտագործողի Հաշվից էլեկտրոնային միավորների ելքագրումը կատարվում է իրական ժամանակում, Գործարքի կատարման պահին:
- 4.18.** **Էլեկտրոնային փողի փոխարկումը** կատարվում է իրական ժամանակում, ինչը նշանակում է, որ փոխարկման ժամանակ Օգտագործողի Հաշվառման հաշվից էլեկտրոնային միավորները առցանց ռեժիմում ելքագրվում են և միանգամից հաշվեգրվում այլ համակարգի նշված հաշվառման հաշվին:
- 4.19.** Էլեկտրոնային փողի փոխարկման համար Օգտագործողը պետք է ճշգրիտ նշի այն համակարգի անվանումը, որի հետ կատարվում է փոխարկման Գործարքը, և տվյալ համակարգում գրանցված հաշվառման հաշիվը, որին պետք է հաշվեգրվի փոխարկվող Էլեկտրոնային փողը:
- 4.20.** Էլեկտրոնային փողի փոխարկման համար կարող է սահմանվել միջնորդավճար, որն ի գիտություն է հասցվում Օգտագործողին՝ նախքան Գործարքը կատարելը:
- 4.21.** Էլեկտրոնային փողի փոխարկումը արտասահմանյան համակարգերի թողարկած էլեկտրոնային փողով կատարելու դեպքում Թողարկողը սահմանում է փոխարկման փոխարժեք, որն ի գիտություն է հասցվում Օգտագործողին՝ նախքան Գործարքը կատարելը:
- 4.22.** Եթե Օգտագործողը կատարված վերջին գործարքից հետո 12 ամսվա ընթացքում իր Հաշվով գործառնություններ չի կատարում, և Հաշվում մնացորդ առկա չէ, ապա Թողարկողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և փակել Օգտագործողի Հաշիվը՝ այդ մասին սույն Պայմանագրի 7.3 կետով նախատեսված որևէ եղանակով ծանուցելով Օգտագործողին:
- 4.23.** Օգտագործողը կարող է ցանկացած ժամանակ միակողմանի լուծել Պայմանագիրը և փակել իր Հաշիվը՝ իր նույնականացման տվյալների օգտագործմամբ էլեկտրոնային դիմում ներկայացնելով Թողարկողին:
- 4.24.** Պայմանագիրը լուծվում և Հաշիվը փակվում է Օգտագործողի դիմումը Թողարկողի ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

Իր հաշիվը փակելու էլեկտրոնային դիմումը Թողարկողին ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում Օգտագործողը կարող է ետ կանչել իր դիմումը և դադարեցնել Պայմանագրի լուծման և Հաշվի փակման գործընթացը:

5. Օգտագործողի նույնականացումը

5.1. Օգտագործողի նույնականացումը կատարվում է հետևյալ տվյալների հիման վրա՝

1. ֆիզիկական անձի անուն, ազգանուն, իրավաբանական անձի անվանում,
2. ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, իրավաբանական անձի գրանցման փաստաթղթի տվյալներ (պետական գրանցման, հաշվառման համարներ),
3. բջջային հեռախոսահամար,
4. Հաշվի գրանցման/նույնականացման տվյալներ:

5.2. Օգտագործողի նույնականացումը իրականացվում է.

5.2.1. Թողարկողի Սպասարկման կետերում,

5.2.2. Տերմինալների միջոցով՝ հաճախորդների սպասարկման մասնագետի կողմից,

5.2.3. Հեռակա եղանակով՝ անմիջապես Բջջային հավելվածի էլեկտրոնային դրամապանակի «Անձնական էջից» կամ էլեկտրոնային դրամապանակին ՀՀ գործող բանկի թողարկած՝ 3D Secure անվտանգության համակարգին միացած բանկային քարտ կցելու միջոցով:

5.3. Թողարկողը Օգտագործողի նույնականացում անցնելու համար Օգտագործողի նույնականացման անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ պարզ և մատչելի ուղեցույց է տրամադրում իր պաշտոնական ինտերնետային կայքում և (կամ) Բջջային հավելվածում:

5.4. Օգտագործողին նույնականացնող տվյալների փոփոխությունը Համակարգում կատարվում է Օգտագործողի դիմումի հիման վրա:

5.5. Համակարգում նույնականացման նույն տվյալներով կարող է լինել միայն 1 (մեկ) Օգտագործող:

6. Կողմերի իրավունքները և պարտականությունները

6.1. Թողարկողն իրավունք ունի.

6.1.1. մերժել չնույնականացված Օգտագործողի այն Գործարքները, որոնք նախատեսված են միայն նույնականացված Օգտագործողների համար,

6.1.2. մերժել Օգտագործողի Գործարքի իրականացումը, եթե նա չի գրանցվել/նույնականացվել Պայմանագրով սահմանված կարգով,

6.1.3. մերժել Օգտագործողի Գործարքի իրականացումը, եթե Օգտագործողի հաշվում առկա էլեկտրոնային փողի մնացորդը բավարար չէ նման Գործարք կատարելու և Թողարկողի սահմանած միջնորդավճարը գանձելու համար,

6.1.4. մերժել Օգտագործողի Գործարքի իրականացումը, եթե դրա կատարումը սահմանափակված կամ արգելված է Համակարգի կանոններով և ՀՀ գործող օրենսդրությամբ,

6.1.5. մերժել Օգտագործողի Գործարքի իրականացումը, եթե Օգտագործողի ներկայացրած գործարքի հանձնարարականում նշված տեղեկությունները սխալ են կամ բավարար չեն տվյալ տիպի Գործարքը կատարելու համար,

6.1.6. չկատարել Օգտագործողի հանձնարարականը, որի համար ներկայացված չեն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը,

6.1.7. Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում արգելափակել Օգտագործողի հաշիվը,

6.1.8. ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում Օգտագործողից պահանջել կատարված Գործարքների մասով տեղեկություններ և փաստաթղթեր՝ ներառյալ վիրտուալ հաշվում առաջացած փողերի ծագման աղբյուրների, կատարված Գործարքի հիմքերի և շահառուների վերաբերյալ,

6.1.9. Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում առանց Օգտագործողի հանձնարարականի, անակցեպատ կարգով նվազեցնել Օգտագործողի հաշվում առկա էլեկտրոնային փողի մնացորդը,

6.1.10. միակողմանի կարգով սահմանել և փոփոխել Հաշվով կատարվող Գործարքների սահմանաչափերը. փոփոխությունները ուժի մեջ են մտնում դրանց մասին տեղեկությունը Թողարկողի կայքում և (կամ) Բջջային հավելվածում հրապարակման պահից, եթե Թողարկողն այլ բան չի նախատեսել,

6.1.11. իրականացնել Համակարգի արդիականացում և ինտերֆեյսի փոփոխություններ, Համակարգի գործունեությունն ապահովող սարքավորումներում և ծրագրերում բարեփոխումների, ծրագրային բարելավումների, անվտանգության մակարդակի բարձրացման և այլ կանխարգելիչ աշխատանքներ կատարելու նպատակով ժամանակավորապես դադարեցնել Համակարգի գործունեությունը՝ նախապես տեղեկացնելով Օգտագործողին,

6.1.12. միակողմանի փոփոխել Պայմանագրի դրույթները:

6.2. Օգտագործողը իրավունք ունի.

6.2.1. Օգտվել Թողարկողի մատուցած ծառայություններից՝ Պայմանագրի պայմանների համապատասխան,

6.2.2. ստանալ տեղեկություններ՝ առաջարկվող ծառայությունների և դրանց սակագների, միջնորդավճարների վերաբերյալ,

6.2.3. Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան ստանալ տեղեկություններ՝ իր Հաշվով կատարված Գործարքների մասին,

6.2.4. Թողարկողին ներկայացնել դիմումներ և բողոքներ՝ Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով,

6.2.5. Թողարկողից ցանկացած ժամանակ պահանջել մարել կամ այլ կերպ տնօրինել իր Հաշվի մնացորդը:

6.2.6. Համակարգում նշել իր էլեկտրոնային հասցեն՝ ամսական կտրվածքով Հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ քաղվածքը ստանալու համար: Ընդ որում՝ եթե Օգտագործողը Համակարգում չի նշել իր էլեկտրոնային փոստի հասցեն, նշանակում է՝ Օգտագործողը հրաժարվում է ստանալ ամսական կտրվածքով Հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ քաղվածքը:

6.3. Թողարկողը պարտավոր է.

6.3.1. ապահովել համակարգի անխափան աշխատանքը,

6.3.2. սահմանել Օգտագործողի նույնականացման պատշաճ ուսումնասիրության ընթացակարգ՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

6.3.3. իր հնարավորությունների սահմաններում ձեռնարկել միջոցներ՝ Օգտագործողի Հաշիվ չարտոնագրված մուտքը կանխելու համար,

6.3.4. Օգտագործողին տեղեկացնել Հաշվով կատարված գործարքների և Հաշվի մնացորդի վերաբերյալ,

6.3.5. միջոցներ ձեռնարկել Թողարկողի միջոցով փոխանակվող տեղեկատվության գաղտնիության պահպանման և երրորդ անձանց չլիազորված մուտքերից, օգտագործումից և (կամ) բացահայտումից պաշտպանության ուղղությամբ,

6.3.6. Օգտագործողի պահանջի դեպքում ապահովել Օգտագործողի կատարած վճարումները հիմնավորող հաշվարկային փաստաթղթերի (վճարման փաստաթղթային անդորրագրի) տրամադրում,

6.3.7. Կեղծիքների, չարտոնագրված գործառնությունների, տեխնիկական սխալների կամ այլ խնդիրների դեպքում, եթե դրանք առաջացել են Թողարկողի մեղքով, իրեն հասանելի մեթոդներով Օգտագործողին անմիջապես տեղյակ պահելուց հետո, փորձել վերականգնել Համակարգի աշխատանքը՝ առավելագույնը 24 (քսանչորս) ժամվա ընթացքում, հակառակ դեպքում հատուցել Օգտագործողի կրած իրական վնասը՝ Օգտագործողի նման պահանջ ներկայացնելու դեպքում,

6.3.8. Հնարավորություն ընձեռել, որպեսզի Օգտագործողը, Համակարգում նշելով իր էլեկտրոնային հասցեն, ստանա քաղվածք՝ ամսական կտրվածքով իր Հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ,

6.3.9. պահպանել Օգտագործողի անձնական տվյալների գաղտնիությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. Օգտագործողը պարտավոր է.

6.4.1. երրորդ անձանց չտրամադրել և որևէ կերպ չհաղորդել իր նույնականացման տվյալները,

6.4.2. Թողարկողին ներկայացնել հետադարձ կապի ճշգրիտ և վավեր տվյալներ,

6.4.3. նույնականացված Օգտագործողի կարգավիճակ ստանալու համար ներկայացնել նույնականացման համար արժանահավատ տվյալներ,

6.4.4. անձնական կամ հետադարձ կապի տվյալների փոփոխման դեպքում աշխատանքային 5 (հինգ) օրվա ընթացքում Թողարկողին ներկայացնել փոփոխված տվյալները,

6.4.5. Թողարկողին տրամադրել Պայմանագրի շրջանակներում պահանջված տեղեկությունները և փաստաթղթերը,

6.4.6. կապի հասանելի միջոցներով (Թողարկողի Կանչերի կենտրոն, էլ. փոստ) Թողարկողին անմիջապես տեղեկացնել իր Հաշվի վերաբերյալ որևէ անհապատասխանություն, սխալ կամ Հաշիվ չարտոնագրված մուտք հայտնաբերելու դեպքում,

6.4.7. Ապահովել Բջջային հավելվածի կառավարման վավերապայմանների (գաղտնաբառեր, PIN կոդեր) գաղտնիությունը և չարտոնված օգտագործումից պաշտպանվածությունը,

6.4.8. Բջջային հավելվածի կառավարման համար օգտագործվող բջջային հեռախոսահամարի կորստի կամ Հաճախորդի տիրապետումից այլ կերպ դուրս գալու

դեպքում անհապաղ տեղեկացնել Թողարկողին՝ վերջինիս զանգերի սպասարկման ծառայության միջոցով կամ անձամբ ներկայանալով Թողարկողի մասնաճյուղ,

6.4.9. Թողարկողին հնարավորինս սեղմ ժամկետում ծանուցել այնպիսի հանգամանքների առաջացման, փոփոխման կամ դադարեցման մասին, որոնք էական նշանակություն ունեն Թողարկողի գործունեության համար, այդ թվում՝ Համակարգում առաջացած կեղծիքների, չարտոնված գործառնությունների, տեխնիկական սխալների կամ այլ խնդիրների մասին:

6.4.10. Կատարել Պայմանագրով սահմանված այլ պարտավորություններ:

7. Պայմանագրի կնքումը (ակցեպտավորումը) և գործողության ժամկետը

7.1. Պայմանագրի ակցեպտավորում (ընդունում) է համարվում Օգտագործողի հետևյալ գործողությունների ավարտը.

ա) Հաշվի գրանցման հայտը լրացնել,

բ) Պայմանագրի պայմաններին ծանոթանալ և գրացվելիս սեղմել Պայմանագրի պայմաններին համաձայնության կոճակը:

7.2. Պայմանագրի ակցեպտավորումը նշանակում է Պայմանագրի բոլոր պայմանների լրիվ և անվերապահ ընդունում՝ առանց որևէ բացառության կամ սահմանափակման, և հավասարազոր է գրավոր կնքված պայմանագրին:

7.3. Պայմանագրի պայմանների ակցեպտավորման ժամկետները սահմանափակ չեն:

Պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումները կատարվում են էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փոստի, Թողարկողի պաշտոնական կայքի, բջջային հավելվածի կամ կարճ հաղորդագրությունների միջոցով, որոնք համարվում են պատշաճ ծանուցում:

7.4. Պայմանագիրը կնքվում է անժամկետ: Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով: Հաճախորդի հարմարության համար Պայմանագիրը, ինչպես նաև կիրառվող սակագները և կանոնները կարող են թարգմանվել հրապարակվել նաև այլ լեզուներով, սակայն նման թարգմանությունների և հայերեն տարբերակի միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

8. Բողոքների քննարկման կարգը

8.1. Պայմանագրի շրջանակներում խնդիրներ կամ անհամապատասխանություններ առաջանալու դեպքում Օգտագործողը կարող է Թողարկողին ներկայացնել դիմում-բողոք:

8.2. Օգտագործողի բողոքները, խնդիրները ընդունվում են.

ա) բանավոր՝ Ընկերության թեժ գծին հեռախոսազանգով,

բ) գրավոր, այդ թվում՝

- առձեռն (Թողարկողի Սպասարկման կետերում),
- փոստով (Ընկերության փոստային հասցեով),
- էլեկտրոնային եղանակով (Ընկերության պաշտոնական կայքի (www.telcell.am) կամ էլեկտրոնային փոստի միջոցով):

8.3. Օգտագործողի դիմում-բողոքի քննարկումն իրականացվում է՝ ՀՀ օրենքներով, իրավական այլ ակտերով և Թողարկողի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

8.4. Թողարկողի հաստատած՝ հաճախորդների դիմում բողոքների ներկայացման և քննության կարգը հրապարակվում է Թողարկողի պաշտոնական կայքի «Հաճախորդների իրավունքները» բաժնում:

9. Գաղտնիություն

9.1. Կողմերը պարտավորվում են չհրապարակել Պայմանագրի շրջանակներում ստացած տեղեկությունները, որոնք համարվում են գաղտնի՝ Կողմերից յուրաքանչյուրի համար:

9.2. Թողարկողը պարտավորվում է ապահովել Օգտագործողի նույնականացման տվյալների, Հաշվի մնացորդի, էլեկտրոնային փողով կատարված Գործարքների մասին տեղեկությունների, Օգտագործողի անձնական տվյալների գաղտնիությունը: Նշված տեղեկությունները կարող են հրապարակվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև այն դեպքում, երբ անհրաժեշտ է Ծառայությունների մատուցման կամ Թողարկողի խախտված իրավունքի պաշտպանության համար: Բոլոր այլ դեպքերում նման տեղեկատվությունը կարող է բացահայտվել միայն Օգտագործողի համաձայնությամբ կամ կարգադրությամբ: Թողարկողն իրավունք ունի վճարում ստացող անձին բացահայտել վճարում կատարողի անձնական տվյալները և վճարման Գործարքին վերաբերող մանրամասները՝ Վճարում ստացողի գրավոր պահանջի և Վճարում կատարողի համաձայնության առկայությամբ:

9.3. Պայմանագրի շրջանակներում գաղտնի չեն համարվում այն տեղեկությունները, որոնք Կողմերը կարող էին օրինական ճանապարհով ստանալ այլ աղբյուրներից՝ առանց գաղտնիության պայմանների խախտման:

9.4. Օգտագործողի կատարած Գործարքների մասին տեղեկությունները պահպանվում են Պայմանագիրը լուծելուց հետո 5 տարի ժամկետով:

10. Պատասխանատվություն և անհաղթահարելի ուժի ազդեցություն

10.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:

10.2. Թողարկողը պատասխանատվություն չի կրում իրենից անկախ պատճառներով փոստային, ինտերնետ և կապի ծառայությունների խափանման, ինչպես նաև Օգտագործողի հետադարձ կապի տվյալների փոփոխման պատճառով Օգտագործողի՝ ժամանակին ծանուցում չստանալու համար:

10.3. Թողարկողը պատասխանատվություն չի կրում Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կապի, էներգամատակարարման, ծրագրային ապահովման և տեխնիկական այլ խափանումների պատճառով չկատարելու համար:

10.4. Թողարկողը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից Օգտագործողի Հաշվով կատարված Գործարքների և (կամ) Օգտագործողի նույնականացման տվյալների բացահայտման համար, եթե դա տեղի է ունեցել Հաշվի օգտագործման ժամանակ կապուղիների գաղտնալսման և (կամ) տվյալների առևանգման հետևանքով:

10.5. Թողարկողը պատասխանատվություն չի կրում Օգտագործողի՝ իր նույնականացման տվյալները երրորդ անձանց տրամադրելու համար:

10.6. Հաշվի կառավարման վավերապայմանների կորստյան, ինչպես նաև դրանք երրորդ անձանց հայտնի դառնալու կասկածի դեպքում Օգտագործողը պարտավոր է Թողարկողի սահմանած կարգով անհապաղ տեղեկացնել Թողարկողին: Մինչև վավերապայմանների արգելափակումը կամ փոփոխումը Օգտագործողը կրում է դրանց չարտոնված օգտագործման հետևանքների ռիսկերը, այդ թվում՝ պատասխանատվություն է կրում Թողարկողին պատճառված վնասների համար:

10.7. Կողմերն ազատվում են Պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները մասամբ կամ ամբողջությամբ չկատարելու պատասխանատվությունից, եթե դրա պատճառը անհաղթահարելի իրավիճակներն են՝ հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, կապուղիների, էներգամատակարարման խափանում և Կողմերի հսկողությունից դուրս այլ իրավիճակներ, ինչպես նաև ՀՀ պետական մարմինների որոշումների, վճիռների և իրավական այլ ակտերի ընդունման դեպքում, որոնք խոչընդոտում են Պայմանագրով Կողմերի պարտավորությունների կատարումը: Կողմերի վերահսկողությունից դուրս իրավիճակ է նաև Թողարկողից անկախ պատճառով կապի խափանման հետևանքով Թողարկողի Համակարգի հնարավոր ընդհատումները:

11. Այլ պայմաններ

11.1. Օգտագործողը երաշխավորում է, որ Պայմանագրի պայմաններն իրեն հասկանալի են և ամբողջությամբ ու անվերապահորեն ընդունելի:

11.2. Օգտագործողը երաշխավորում է, որ իր Հաշիվը չի օգտագործելու անօրինական գործողություններ կատարելու համար:

11.3. Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ անկախ Օգտագործողի գտնվելու վայրից:

11.4. Սույն օֆերտայի ակցեպտավորմամբ Օգտագործողը տալիս է իր անվերապահ համաձայնությունը, որ «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ-ն (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ) երրորդ անձանցից ստանա Օգտագործողի վերաբերյալ տեղական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող տվյալների բազաներում պահպանվող անձնական ցանկացած տվյալ և մշակի այն՝ Օգտագործողի կողմից խնդրարկվող գործարքը կատարելու համար: Օգտագործողն ի գիտություն ընդունում է, որ հարցումն ուղարկվելու է մեկ անգամ, հարցված անձնական տվյալները չեն պահպանվելու և չեն փոխանցվելու երրորդ անձանց, Օգտագործողը ցանկացած պահի կարող է պահանջել կատարել հարցված անձնական տվյալների ուղղում, ոչնչացում, տվյալների մշակման դադարեցում:

11.5. Օգտագործողը հաստատում է, որ Բջջային հավելվածով գործարքներ կամ որևէ այլ գործողություն կատարելիս իր ստորագրության անալոգ են համարվում.

Ա) Օգտագործողի նույնականացման տվյալները. Օգտագործողի նույնականացման տվյալ(ներ)ի (Օգտագործողի մուտքանուն և (կամ) գաղտնաբառ) օգտագործմամբ իրականացվող բոլոր գործողությունները ճանաչվում են որպես Օգտագործողի կողմից կատարված, Օգտագործողի նույնականացման տվյալ(ներ)ի օգտագործմամբ ուղարկվող բոլոր փաստաթղթերը համարվում են Օգտագործողի կողմից ստորագրված և ուղարկված, Օգտագործողի նույնականացման տվյալ(ներ)ի օգտագործմամբ հաստատվող բոլոր փաստաթղթերը համարվում են Օգտագործողի կողմից ստորագրված, այդ թվում նաև այն դեպքերում, երբ փաստաթուղթը հաստատվել է՝ «Հաստատում եմ» կոճակը սեղմելով,

Բ) Բջջային հավելվածում Օգտագործողի մուտքագրած էլեկտրոնային փոստի հասցեն. նշված էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված բոլոր նամակները համարվում են Օգտագործողի կողմից ստորագրված և ուղարկված:

12. Թողարկողի վավերապայմանները

Անվանում՝	«ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն
Հասցե՝	ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
Հարկային հաշվառում՝	ՀՎՀՀ 02703102
Վեբ-կայք՝	www.telcell.am
Էլ.հասցե՝	info@telcell.am
Հեռախոս՝	+374 (60) 27-22-22